ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 188-Ա

ԳԱՐԵԳԻՆ ԷԴՈՒՎԱՐԴԻ ՄԱԿԱՐՅԱՆԻՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐԻ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արման Հարությունյանի դիմումը և «Ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» 2002թվականի դեկտեմբերի 26-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որը նրանց պատկանող հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու համար, այն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցուցակում, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության , ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքը և չի առաջացնում սերվիտուտ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ճանաչել Գարեգին Էդուվարդի Մակարյանի /ծնված 1965թ./ սեփականության իրավունքը ըստ քարտեզագրման արդյունքների 0.01765 հա ընդհանուր մակերեսով ավել օգտագործվող հողամասի նկատմամբ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 189-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՐՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՉՈՐԱՑԱԾ ԾԱՌԵՐԸ ՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Թույլատրել սանիտարական հատում իրականացնելու նպատակով հատել Վայք համայնքի Սերս բնակավայրի 1-ին և 11-րդ փողոցների հատման խաչմերուկի հարակից տարածքում գտնվող ուռենին (թվով մեկ հատ), որը կայծակի հարվածից վնասվել (չորացել) է և ընկնելու վտանգի տակ է, և նույն հատվածում գտնվող բարդին (թվով մեկ հատ), որը չորացած է:

2.Ստացված վառելափայտը հատկացնել Արցախից բռնի տեղահանված ընտանիքներին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 190-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06.09.2023Թ-Ի ԹԻՎ 175-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի ղեկավարի 06.09.2023 թվականի թիվ 175-Ա որոշման բովանդակության 1-ին կետում «6.69520 հա վարելահող» բառերի փոխարեն գրել «4.04681 հա վարելահող, 2.64856 հա այլ հողատեսք» բառերը, և «չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023AXHLDU» բառերի փոխարեն գրել «չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023FUUBKQ» բառերը, այնուհետև ինչպես տեքստում:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 191-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06.09.2023Թ-Ի ԹԻՎ 176-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի ղեկավարի 06.09.2023 թվականի թիվ 176-Ա որոշման բովանդակության 1-ին կետում «2.41548 հա » բառերի փոխարեն գրել «2.23526 հա այլ հողատեսք , 0.17903 հա վարելահող» բառերը, և «չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023LC6U6E» բառերի փոխարեն գրել «չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 202378SY2Q» բառերը, այնուհետև ինչպես տեքստում:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 192-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՆԻ ԱՐԻՍԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆԱԺ /ՕԳՆԱԿԱՆ/ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ՀՀ Կառավարության 02.06.2016թ. թիվ 631-Ն որոշմամբ ընդունված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 3-րդ գլխի 14-րդ կետի դրույթներով,և հիմք ընդունելով Վայք համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի Վայք քաղաքի Շինարարների փ. տուն 2 հասցեյի բնակիչ Անի Արիսի Գևորգյանի նկատմամբ սահմանել պատրոնաժ /օգնական/:
2.Որպես պատրոն /օգնական/ նշանակել ամուսնուն՝ Էդգար Ռաֆիկի Հակոբյանին:
3.Պատրոնին /օգնականին/ իրավունք է վերապահվում Անի Գևորգյանի համաձայնությամբ կատարել ապրուստի ու նրա կենցաղային կարիքների բավարարմանն ուղղված կենցաղային և այլ գործարքներ:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 193-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԵՆ ԱՂԱՍՈՒ ԿՈՒՂԻԱՆՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ 04.02.2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 7 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «ընտանեկան օրենսգրքի» 134-րդ և 135-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «քաղաքացիական օրենսգրքի» 34-րդ և 37-րդ հոդվածներով, Հայասատանի Հարապետության Կառավարության 2016թ.-ի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման դրույթներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև հաշվի առնելով Վայք համայնքի բնակիչ Հովիկ Արմենի Կուղիանոսյանի դիմումը, Վայք համայնքի ղեկավարին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 05/10/2023 թվականի արձանագրությունը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ղեկավարի 04.02.2019 թվականի թիվ 7-Ա «Անգործունակ Արմեն Աղասու Կուղիանոսյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու և խնամակալ նշանակելու մասին» որոշումը:
2. Վայք համայքի Վայք քաղաքի բնակիչ Արմեն Աղասու Կուղիանոսյանի (ծնված 18.09.1967թ.) նկատմամբ սահմանել խնամակալություն, հաշվի առնելով նրա վերաբերյալ դատարանի կողմից 23.11.2018թ-ին անգործունակ ճանաչվելու մասին դատական ակտը:
3. Որպես խնամակալ նշանակել որդուն՝ Հովիկ Արմենի Կուղիանոսյանին (ՀՀ անձնագիր՝ AP0457381, տրված 08.06.2016թ. 020-ի կողմից, ծնված 03.04.2000թ.) :
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հովիկ Արմենի Կուղիանոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 194-Ա

«ԱԼԺԱԿ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ԱՐՏՈՒՇ ԽԱԺԱԿԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 5.1 կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետերի համաձայն և ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 14-րդ և 17-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի 1-ն փողոց 40 հասցեում գտնվող գտնվող «ԱԼԺԱԿ» ՍՊԸ-ի տնօրեն Արտուշ Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող իր սեփականություն հանդիսացող հողամասի վրա իր իսկ կողմից կառուցված 79,39 քմ մակերեսով 2023H5CFCH հաշվառման ծածկագրով շինությունը, որի զբաղեցրած և սպասարկման համար առանձնացված հողամասի մակերեսը կազմում է 0,2 հա, համարել օրինական:
2. Ընդունել ի գիտություն, որ կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցը քանդման ենթակա չէ, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեին՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու նպատակով:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված 79,39 քմ մակերեսով կառույցը ճանաչել օրինական, սահմանված չափով և կարգով առաջարկ կատարել կառույցն իրականացրած անձ Արտուշ Դավթյանին շինության համար վճարել 100 190 /79.39 x 1262/ ՀՀ դրամ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 195-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓՈՌ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,046 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաեվ անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Փոռ բնակավայրում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,046 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և հասցեավորել՝ Վայք համայնք, Փոռ բնակավայր, 1-ին բնակելի տուն:
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3. Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**